ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԱՀԻՏ ԱՐՄԵՆԻ ՍԵՐՈԲՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՓԱՓՈՒԿ ՈՒԺԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2025

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АНАИТ СЕРОБЯН АРМЕНОВНА

МЯГКАЯ СИЛА ТУРЦИИ В ПРОЦЕССАХ РЕГИОНАЛЬНОЙ ИНТЕГРАЦИИ ГРУЗИИ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук
по специальности 23.00.02 “Политические институты и процессы”

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН-2025

Ատենախոսության թեման հաստատվել է **Երևանի պետական համալսարանում:**

Գիտական ղեկավար՝
քաղաքական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Գարիկ Միշայի Քեռյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
քաղաքական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Խաչիկ Սամվելի Գալստյան**
քաղաքական գիտությունների թեկնածու,
ասիստենտ **Կարինե Գագիկի Խոջայան**

Առաջատար կազմակերպություն՝ **Հայ-Ռուսական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2025 թվականի հոկտեմբերի 22-ին, ժամը 14:30-ին ԵՊՀ-ում գործող ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2025 թվականի սեպտեմբերի 19-ին:
ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի 056 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, քաղաքական
գիտությունների թեկնածու, դոցենտ **Առնակ Սարգսյան Գեորգիի**

Тема диссертации утверждена в **Ереванском государственном университете.**

Научный руководитель:
доктор политических наук, профессор **Гарик Мишаевич Керян**

Официальные оппоненты:
доктор политических наук, профессор **Хачик Самвелович Галстян**
кандидат политических наук, ассистент **Карине Гагиковна Ходжаян**

Ведущая организация: **Российско-Армянский университет**

Защита состоится 22 октября 2025 г. в 14:30 часов на заседании действующего в ЕГУ специализированного совета 056 “Политология и международные отношения” МОНКС КВОН РА. Адрес: РА, г. Ереван 0025, Алека Манукяна, 1. С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ.
Автореферат разослан 19 сентября 2025 г.

Научный секретарь
специализированного совета, 056 МОНКС КВОН РА,
кандидат исторических наук, доцент **Арнак Георгиевич Саргсян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հարավային Կովկասը, որը գտնվում է Եվրոպայի և Ասիայի խաչմերկում, միշտ եղել է պետությունների, կրոնների բախման թատերաբեմ: Ներկայումս, միջազգային հարաբերությունների վերափոխման համատեքստում, Հարավային Կովկասը, շնորհիվ իր աշխարհառազմավարական դիրքի և Կասպից ծովի ավազանի զգալի էներգետիկ պաշարների, դարձել է տարածաշրջանային և արտատարածաշրջանային արտաքին քաղաքականության առաջնահերթ ուղղությունների կիզակետը: Հարավային Կովկասում ակտիվ քաղաքականություն վարող հզոր պետություններից է Թուրքիան, որն արտաքին քաղաքականության հարավկովկասյան վեկտորի իրականացման համատեքստում մեծ ուշադրություն է դարձնում Վրաստանին, որն իր տարածաշրջանային էներգատրանսպորտային նախագծերում հատուկ տեղ է զբաղեցնում: Թուրքիան տարիների ընթացքում խորացրել է իր հարաբերությունները Վրաստանի հետ տարբեր ոլորտներում և նոր ուղիներ փնտրել այս երկրի վրա իր ազդեցությունը մեծացնելու համար, այս գործում Թուրքիան նաև կիրառել է «փափուկ ուժի» գործիքակազմը:

«Թուրքիայի փափուկ ուժը Վրաստանի տարածաշրջանային ինտեգրման գործընթացներում» վերնագրով ատենախոսությունը նպատակ ունի ուսումնասիրել և վերլուծել Թուրքիայի դերը Վրաստանի տարածաշրջանային դինամիկայի ձևավորման գործում՝ խորանալով երկկողմ հարաբերությունների և ավելի լայն տարածաշրջանային հետևանքների մեջ: Այս ուսումնասիրության արդիականությունն ընդգծվում է մի քանի փոխկապակցված գործոններով: Նախ՝Թուրքիայի ռազմավարական դիրքը, Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի միջև կամուրջի դերը նրան դարձնում է կարևոր դերակատար տարածաշրջանային աշխարհաքաղաքականության մեջ, երկրորդ՝ Թուրքիայի և Վրաստանի միջև բազմակողմ հարաբերությունները դուրս են եկել տնտեսական համագործակցությունից՝ ներառելով

քաղաքական, մշակութային և անվտանգության հարթությունները: Թուրքիայի դերը՝ որպես ՆԱՏՕ-ի անդամ, և նրա աջակցությունը Վրաստանի եվրատլանտյան նկրտումներին, նրան դարձնում են տարածաշրջանային անվտանգության դինամիկայի կենտրոնում:

Երրորդ՝ այս ուսումնասիրությունը ձեռք է բերում հրատապություն և նշանակություն՝ հաշվի առնելով Վրաստանի փոփոխվող քաղաքական դասավորությունները և մարտահրավերները, որոնք բխում են Ռուսաստանի և Արևմուտքի մրցակցային ազդեցություններից: Թուրքիայի և Վրաստանի միջև ռազմավարական գործընկերությունը կարևորում է տարածաշրջանային շահերի հատումը, որտեղ Թուրքիայի փափուկ ուժը և տնտեսական ներդրումները նպաստում են Վրաստանի կայունությանը և զարգացմանը՝ միաժամանակ խթանելով նրա ինտեգրումը համաշխարհային շուկաներին:

Հետազոտության ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ թուրքական քաղաքականության իրականացումը Հարավային Կովկասում շոշափում է Ռուսաստանի Դաշնության ազգային անվտանգության շահերը, ինչպես նաև նրա քաղաքականությունը հարավկովկասյան երկրների նկատմամբ:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը:

Հետազոտությունը գրելիս, կարևոր ենք համարել անդրադառնալ փափուկ ուժի գործիքակազմին, քանի որ Թուրքիան արդյունավետորեն օգտագործում է փափուկ ուժը Վրաստանի հետ հարաբերություններում մշակութային, կրթական և կրոնական դիվանագիտության միջոցով: Այն Թուրքիային հնարավորություն է տալիս ամրապնդել իր ազդեցությունը Վրաստանում՝ չհենվելով հարկադրական մարտավարության վրա՝ հիմք ստեղծելով երկարաժամկետ երկկողմ համագործակցության համար:

Մասնագիտական գրականության մեջ «փափուկ ուժի» տեսության հիմնարար աշխատություններից մեկը համարվում է Ջոզեֆ Նայի «Պարտադիր առաջնորդել. Ամերիկյան իշխանության փոփոխվող

բնույթը»[1]: Այս հիմնական աշխատանքը ներկայացրեց «փափուկ ուժի» հայեցակարգը՝ որպես երկրի կարողություն՝ հասնելու ցանկալի արդյունքների ոչ թե պարտադրանքի, այլ գրավչության և համոզման միջոցով: Նայը հետագայում զարգացրեց այս գաղափարը իր հաջորդ հրապարակման մեջ՝ «Փափուկ ուժ. համաշխարհային քաղաքականության մեջ հաջողության միջոցները»[2], որը մնում է անկյունաքար՝ հասկանալու մշակութային դիվանագիտության, արժեքների և քաղաքականության դերը միջազգային հարաբերությունների ձևավորման մեջ: «Փափուկ ուժ» հասկացության վերաբերյալ խորը ուսումնասիրություններ են իրականացրել մի շարք հետազոտողներ ևս, որոնցից կարելի է առանձնացնել Ք. Գրեյին, Մ. Կունալակիսին և Ա. Շիմոնիին, ովքեր միասին ունեն համատեղ աշխատություն գրած[3]:

Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական գործընթացների վերլուծությամբ զբաղվող ռուս գիտնականների աշխատությունների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում Ս. Հաջիևը[4]. Նա իր աշխատություններում վերլուծել է աշխարհաքաղաքական իրավիճակը Հարավային Կովկասում և ուսումնասիրել Ռուսաստանի արտաքին քաղաքական կուրսը այս մասով: Հատուկ ուշադրություն է

---

[1] Տե՛ս Nye, J. Bound to lead: The changing nature of American power / J. Nye - NY: Basic books, 1990. P. 20.

[2] Տե՛ս Nye, J. Soft Power: The Means to Success in World Politics / J. Nye - NY: Public Affairs, 2004. – P. 111.

[3] Տե՛ս Kounalakis, M. Simonyi A. The Hard Truth about Soft Power / M. Kounalakis, A. Simonyi // CPD Perspectives on Public Diplomacy. - 2011, Paper 5. – P. 31.

[4] Տե՛ս Гаджиев К.С. Геополитика. М., 1997. 382 с.; Гаджиев К.С. Геополитика Кавказа. М, 2003. 464 с.; Гаджиев К.С.Кавказский узел в геополитических приоритетах России. М., 2010. 531 с.; Гаджиев К.С. «Большая игра» на Кавказе: вчера, сегодня, завтра. М., 2010. 344 с.; Гаджиев К.С. О некоторых тенденциях в современном мире вгеополитическом измерении // Геополитический журнал. 2015. No 4(11). С. 15-23; Гаджиев К.С. Российская Федерация: национальное государство или государство народов? // Полис. Политические исследования. 2018. No 3. С. 130-146.

դարձրել Հարավային Կովկասի տարածաշրջանում միջազգային հարաբերությունների տարածաշրջանային և ոչ տարածաշրջանային դերակատարների քաղաքական և տնտեսական շահերին:

Թուրքիայի արտաքին քաղաքականությունը, մասնավորապես նրա տեսական հիմքերը, լայնորեն ուսումնասիրվել է Ահմեդ Դավութօղլուի կողմից, որի «Ռազմավարական խորություն»[5] աշխատությունը հիմք դրեց ժամանակակից թուրքական դիվանագիտության: Ա. Դավութօղլուի «Զրո խնդիր հարևանների հետ» հայեցակարգը դարձավ Թուրքիայի արտաքին քաղաքականության անկյունաքարը 2000-ականների սկզբին՝ շեշտը դնելով հակամարտությունների կարգավորման, տարածաշրջանային ինտեգրման և հարևան պետությունների, այդ թվում՝ Վրաստանի հետ համագործակցային հարաբերությունների հաստատման վրա: Այս աշխատության մեջ, ինչպես նաև հետագա գիտական աշխատություններում, թուրք պրոֆեսորը հիմնավորել է նախկին օսմանյան տարածքները «վերահսկելու» Թուրքիայի իրավունքը[6]:

Թուրքիայի քաղաքականությունը Վրաստանի նկատմամբ, թուրք-վրացական հարաբերությունների տարբեր ասպեկտներ ուսումնասիրվել են թուրք հետազոտող Կ. Քիրիշչիի[7] գիտական և վերլուծական աշխատություններում:

Թուրքիայի արտաքին քաղաքականության վերաբերյալ ուսումնասիրությունը անելիս՝ օգտվել ենք նաև ռուս մասնագետների

---

[5] Տե՛ս Davutoğlu A. Strategic Depth: Turkey's international position. Istambul, 2001, P.584

[6] Տե՛ս Davutoğlu A. Türkiye merkez ülke olmalı // Radıkal. 2004. 26 Şubat. – URL: http://www.radikal.com.tr/yorum/turkiye-merkez-ulke-olmali-702116/ . Davutoğlu, A. Turkey’s foreign police vision: An assessment of 2007 // Insight Turkey. 2008. Vol. 10. No. 1. P. 77-96; Davutoğlu A. Turkey’s Zero problem Foreign Policy // Foreign Policy. 2010. May 20. – URL:https://foreignpolicy.com/2010/05/20/turkeys-zero-problems-foreign-policy/.

[7] Տե՛ս Kirişci K., Moffat A. Turkey ant the South Caucasus: An Opportunity for Soft Regionalizm // Regional Security issues.2015. P. 67-89.

աշխատանքներից, կարելի է առանձնացնել Ա. Գուրևի[8], Ի. Տորբակովի[9], Վ. Ուրիգաևի[10], Օ. Ալլենովայի[11] աշխատությունները և հետազոտությունները:

Վրացի հեղինակներից օգտվել ենք Պ. Արոշիձեի[12], Ի. Չխիվաձեի[13], Ն. Տակտակիշվիլիի[14], Գ. Բիլանշվիլիի[15], Ս. Մինեաշվիլիի[16], Ռ. Բարամիձեի[17], Զ. Թևզաձեի[18] աշխատությունները և հետազոտությունները:

---

[8] Տե՛ս Гурьев А.А Партия справедливости и развития Турции: три года у власти// 2005. – URL: http://www.iimes.ru/?p=3972.

[9] Տե՛ս Igor Torbakov, "The Georgia Crisis and Russia-Turkey Relations", The Jamestown Foundation, //(2008), http://www.jamestown.org/uploads/media/GeorgiaCrisisTorbakov.pdf.

[10] Տե՛ս Уригаев В.В. «Мягкая сила» Турции в воздействии на Грузию и Черноморский регион // Теории и проблемы политических исследований. 2019. Том 8. № 3А, с. 150,//http://publishing-vak.ru/file/archivepolitology-2019-3/17-urigaev.pdf .

[11] Տե՛ս Алленова О. Грузия в тот момент просто умерла//Коммерсантъ Власть. – М., 2012. – № 39 (993). –URL: https://www.kommersant.ru/doc/2029619

[12] Տե՛ս Арошидзе П. Л. Трубопровод НАБУККО – энергетическая альтернатива для Европы//URL: https://moluch.ru/archive/13/1135/

[13] Տե՛ս Chkhikvadze I. Zero problems with neighbors: The case of Georgia [Էլ. ռեսուրս] // Turkish Foreign Policy. Summer 2011. P. 3. – URL: http://turkishpolicy.com/Files/ArticlePDF/zero-problems-with-neighbors-the-case-ofgeorgia-summer-2011-en.pdf

[14] Տե՛ս Taktakishvili N.,´´ We Are Pleased That Turkish Companies Continue To Invest In Georgia's Economy´´, Business Media.URL: https://bm.ge/en/news/we-are-pleased-that-turkish-companies-continue-to-invest-in-georgias-economy-pm

[15] Տե՛ս Bilanishvili G., Rondeli Foubdation."National Security Policy – Problems and Challenges", URL: https://gfsis.org.ge/publications/view/2681?utm_source=chatgpt.com

[16] Տե՛ս Mineashvlili S. European Identity and Foreign Policy in Georgia and Ukraine Since 1991,2022,p.66

[17] Տե՛ս Baramidze R., Islam and the Muslims of Ajaria (historical-ethnographic and socio-cultural aspects), Batumi, 2008, p. 167

[18] Տե՛ս Tevzadze Z., "Caspian Oil" pp. 98-99.

Էներգետիկ գործոնի ուսումնասիրությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ արտացոլված է Զ. Բարանի[19], Վ. Հուսեյնովի[20], Գ. Վինրովի[21], Պ. Արոշիձեի[22] աշխատություններում և հետազոտություններում:

Աշխատության մեջ նաև օգտագործվել է հայ հեղինակների աշխատություններ, այդ հեղինակներից են Գ. Քեռյանը[23], Է. Դավթյանը[24], Ա. Հովհաննիսյանը[25], Վ. Տեր-Մաթոսյանը[26], Ա. Նավասարդյանը[27]:

Վերոնշյալ հեղինակների աշխատությունների ուսումնասիրությունը թույլ է տվել ավելի խորը հասկանալ և վերաիմաստավորել

---

[19] Տե՛ս Baran Z., The Baku-Tbilisi -Ceyhan Pipeline: Implications for Turkey', working paper, Central Asia-Caucasus Institute, Silk Road Studies Program, 2005

[20] Տե՛ս Гусейнов В. Каспийская нефть, экономика и геополитика. М., 2002. С.332.

[21] Տե՛ս Winrow G., The Southern Gas Corridor and Turkey's Role as an Energy Transit State and Energy Hub. Insight Turkey. 2013;15(1):145-163

[22] Տե՛ս Арошидзе, П. Л. Трубопровод НАБУККО – энергетическая альтернатива для Европы//URL: https://moluch.ru/archive/13/1135/ .

[23] Տե՛ս Քեռյան Գ., «Վրաստանի աշխարհաքաղաքական տեղաշարժը. ներքին և արտաքին գործոններ», // «Регион и мир», №5, 2024, էջ 22 //URL: https://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2024_5_20_28.pdf .

[24] Տե՛ս Դավթյան Է., «Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան տնտեսական և ռազմաքաղաքական եռակողմ համագործակցությունը 1991-2016 թթ», 2018, https://arar.sci.am/Content/40019/PDF/file_0.pdf

[25] Տե՛ս Ованнисян А., Аджарский вопрос» в турецко-грузинских отношениях на современном этапе, «21-й ВЕК», № 3 (48), 2018г., с. 44, //http://noravank.am /upload/pdf/Andrani_Hovhannisyan_21VEK_03_2018.pdf .

[26] Տե՛ս Տեր-Մաթևոսյան Վ., Թուրքիայի քաղաքական և սոցիալ-տնտեսական գործունեության հետևանքները Վրաստանում.//«21-րդ ԴԱՐ», թիվ 1 (65), 2016, էջ 38,// https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/XXI%20Dar/01_2016.pdf.

[27] Տե՛ս Նավասարդյան Ա., Հայ-վրացական հարաբերությունները տարածաշրջանային նոր զարգացումների խորապատկերում. // «Տարածաշրջան և աշխարհ», թիվ 5, 2020, էջ 11 //https://cyberleninka.ru/article/ n/armenian-georgian-economic-relations-against-the-background-of-new-regional-developments/viewer.

թուրքական գործոնը Վրաստանի տարածաշրջանային և քաղաքական գործընթացներում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը՝ հարավկովկասյան տարածաշրջանում փափուկ ուժի գործիքակազմի կիրառումն է Թուրքիայի կողմից: Հետազոտության առարկան՝ թուրքական փափուկ ուժի գործոնն է Վրաստանի տարածաշրջանային գործընթացներում:

Հետազության նպատակը և խնդիրները:

Ատենախոսական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և վերլուծել Թուրքիայի դերը Վրաստանի տարածաշրջանային-քաղաքական գործընթացներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով նրանց երկկողմ և տարածաշրջանային փոխգործակցությունները ձևավորող տնտեսական, մշակութային և աշխարհաքաղաքական գործոնների փոխազդեցությանը:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար հետազոտության շրջանակում սահմանվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- **վերլուծել** Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական նշանակությունը և արժևորել Վրաստանի դերը Թուրքիայի տարածաշրջանային-քաղաքական ռազմավարության շրջանակներում:
- **բացահայտել** Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության հիմնական առանձնահատկություններն ու առաջնահերթությունները և նրա ռազմավարական նպատակները Հարավային Կովկասում:
- **ուսումնասիրել** Վրաստանի նկատմամբ Թուրքիայի արտաքին քաղաքականության էվոլյուցիան՝ կենտրոնանալով քաղաքական, տնտեսական և մշակութային հարթությունների վրա:
- **ուսումնասիրել** այն մեխանիզմները, որոնց միջոցով Թուրքիան իրականացնում է իր տնտեսական ազդեցությունն ու ռազմավարությունը Վրաստանում:

- **արժևորել** տրանսպորտային և էներգետիկ համագործակցության դերը (օրինակ՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան, Բաքու-Թբիլիսի-Էրզրում և Բաքու-Թբիլիսի-Կարս նախագծերը) թուրք-վրացական հարաբերությունների և տարածաշրջանի էներգետիկ անվտանգության լանդշաֆտի ձևավորման գործում:
- **ուսումնասիրել** Թուրքիայի հատուկ դերն ու ազդեցությունը Աջարիայի տարածաշրջանում՝ հաշվի առնելով նրա աշխարհագրական մերձությունը, պատմական կապերը և ռազմավարական նշանակությունը թուրք-վրացական հարաբերությունների համար:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության մեթոդաբանությունը հիմնված է պատմաքաղաքական, քաղաքական-տնտեսական և քաղաքական-մշակութային մոտեցումների վրա: Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած են համեմատական վերլուծության, փաստաթղթերի վերլուծության, վերլուծական-կանխատեսական մեթոդները: Թեմայի վերաբերյալ համակողմանի պատկերացում կազմելու համար կատարել ենք գրականության մանրակրկիտ ուսումնասիրում՝ կենտրոնանալով Վրաստանի տարածաշրջանային-քաղաքական գործընթացներում Թուրքիայի ազդեցության հետ կապված աշխատանքների վրա: Այս ամենը մեզ թույլ է տվել վերլուծել ոլորտի տարբեր գիտնականների փորձն ու ձեռքբերումները, բացահայտել հակասություններն ու փոխլրացումները նրանց հետազոտության մեջ: Ուսումնասիրելով ակադեմիական հրապարակումները, քաղաքական զեկույցները և պատմական փաստերը՝ մենք կարողացանք մեր ուսումնասիրությունը տեղավորել ավելի լայն ակադեմիական դիսկուրսի շրջանակներում և հիմնվել առկա գիտելիքների վրա՝ շտկելով բացերը և առաջարկելով նոր հեռանկարներ:

Հետազոտության շրջանակներում օգտագործել ենք քանակական հետազոտության մոտեցումներ, ինչպիսիք են առևտրատնտեսական տվյալների, ինչպես նաև սոցիալական հարցումների արդյունքների

վերլուծությունը: Այդ նպատակով օգտվել ենք տվյալների պաշտոնական և վերլուծական աղբյուրներից, ինչպիսիք են Վրաստանի վիճակագրական ծառայությունը, Թուրքիայի վիճակագրական ինստիտուտը, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնը (CRRC) և Համաշխարհային բանկը, ինչպես նաև բազմաթիվ կայքեր և հրապարակումներ, որոնք ներկայացնում են ֆինանսատնտեսական վիճակագրություն: Հավաքված տվյալները ենթարկվել են սինթեզի, համեմատության և մանրակրկիտ վերլուծության՝ տարածաշրջանային-քաղաքական գործընթացների համատեքստում Թուրքիա-Վրաստան հարաբերությունների համապարփակ ըմբռնում տալու համար:

Հետազոտության գիտական նորույթը: Թուրքիայի և Վրաստանի վերաբերյալ գոյություն ունեցող գրականության մեծ մասը հիմնականում կենտրոնանում է տնտեսական և անվտանգության հարաբերությունների վրա, այս հետազոտությունը առաջարկում է ինքնատիպ, բազմաչափ շրջանակ, որն ինտեգրում է «փափուկ ուժի» տեսությունը, տարածաշրջանային ինտեգրումը և աշխարհաքաղաքական ռազմավարությունները: Ըստ այդմ արձանագրել ենք գիտական նորույթ պարունակող հետևյալ արդյունքերը.

1. Հիմնվելով սեփական ուսումնասիրությունների և ուսումնասիրած գրականության վրա ՝ փորձել ենք «փափուկ ուժ» հասկացության համար տալ նոր սահմանում՝ *«Փափուկ ուժը պետության կամ սուբյեկտի ռազմավարական կարողությունն է՝ ձևավորելու այլ դերակատարների նախասիրությունները, ընկալումները և վարքագիծը ոչ հարկադրական միջոցների շնորհիվ՝ օգտագործելով մշակութային կապը, արժեքային համադրումը, տնտեսական գործընկերությունները և խորհրդանշական ազդեցությունը: Այն զարգանում է պատմություններ կառուցելու և հարաբերություններ հաստատելու ունակությամբ, որոնք*

առաջացնում են վստահություն, հիացմունք կամ կախվածություն՝ դրանով իսկ հնարավորություն տալով ազդողին հասնել աշխարհաքաղաքական կամ ռազմավարական նպատակներին՝ առանց բացահայտ ճնշման կամ ուժի»:

2. Հետազոտությունը բացահայտում և վերլուծության է ենթարկում փոքր պետությունների հնարավորությունները՝ խորը ուսումնասիրություն անելով և հասկանալով, թե ինչպես է Վրաստանը, որպես հզոր հարևանների ստվերում գտնվող ավելի փոքր դերակատար, օգտագործում Թուրքիայի հետ իր հարաբերությունները՝ իր անվտանգությունն ապահովելու և դիվանագիտական մարտահրավերները լուծելու համար:
3. Հետազոտությունը նաև նորարարական ներդրում է կատարում՝ համեմատելով Թուրքիայի աշխարհաքաղաքական ներգրավվածությունը Վրաստանում նրա հարաբերությունների հետ տարածաշրջանային այլ դերակատարների հետ, ինչպիսիք են Ռուսաստանը, Իրանը և Եվրամիությունը՝ ապահովելով ավելի համապարփակ պատկերացում Թուրքիայի դիրքորոշման մասին ավելի լայն շրջանակում:
4. Փաստարկներով հիմնավորվել է, որ Վրաստանի նկատմամբ Թուրքիայի ակտիվ քաղաքականությունն ուղղված է այս երկրում և ընդհանրապես Հարավային Կովկասում նրա դիրքերի ամրապնդմանը, ինչպես նաև տարածաշրջանում Ռուսաստանի Դաշնության դերի նվազեցմանը:
5. Նորովի է լուսաբանվել Թուրքիայից Վրաստանի կախվածության հանգամանքները՝ հիմնավորելով արտաքին քաղաքականության մեխանիզմներով, երկկողմ, այնպես էլ բազմակողմ մակարդակներով:
6. Հիմնավորվել է Վրաստանում թուրքական համայնքի տեղն ու դերը որպես Աջարիայում թուրքական շահերի առաջմղման առանցքային գործոն: Նորովի է ներկայացվել, թե ինչպես է տեղական համայնքը վերածվում արտաքին քաղաքականության

իրականացման գործիքի՝ ընդգծելով էթնո-կրոնական գործոնների ազդեցությունը տարածաշրջանային գործընթացների վրա:

7. Վերհանվել և նորովի հիմնավորվել է Թուրքիայի արտաքին քաղաքականության վրացական վեկտորի տնտեսական բաղադրիչի՝ մասնավորապես էներգետիկ գործոնի, առաջնային նշանակությունը երկկողմ հարաբերությունների ձևավորման վաղ փուլում: Աշխատությունը լրացնում է գոյություն ունեցող գիտական բացը՝ շեշտադրելով էներգետիկ համագործակցության վճռորոշ դերը թուրք-վրացական հարաբերությունների ամրապնդման գործում:
8. Հիմնավորվել է «Թուրքիա–Ադրբեջան–Վրաստան» եռակողմ ձևաչափը որպես Թուրքիայի տարածաշրջանային նախաձեռնությունների իրագործման արդյունավետ գործիք: Աշխատության շրջանակում բացահայտվել են եռակողմ համագործակցության ձևավորման հիմնական նախադրյալները, ինչպես նաև վերլուծվել են այն գործոնները, որոնք նպաստում են այս ձևաչափի շարունակական զարգացմանն ու կայունությանը:

Հետազոտության գիտատեսական և կիրառական նշանակությունը: Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունն այն է, որ այս ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել քաղաքական երկրագիտության և տարածաշրջանագիտության ուղղություններով մասնագետների վերապատրաստման համար:

Ատենախոսությունը կարող է գործնական նշանակություն ունենալ Թուրքիայի արտաքին քաղաքականությամբ հետաքրքրվող կամ եվրասիական աշխարհաքաղաքականության վրա աշխատող քաղաքական վերլուծաբանների համար, ինչպես նաև, տարածաշրջանային անվտանգության և հակամարտությունների կարգավորման մեջ ներգրավված հետազոտողները և քաղաքականություն մշակողները կարող են օգտվել աշխատանքից և վերլուծություններ անել Թուրքիայի ազդեցության վերաբերյալ

այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են պաշտպանական համագործակցությունը, փափուկ ուժը և տնտեսական նախագծերը:

Ատենախոսության համեմատական վերլուծությունը Թուրքիա-Վրաստան հարաբերությունների վերաբերյալ տարածաշրջանային տերությունների ավելի լայն համատեքստում ապահովում է համեմատական աշխարհաքաղաքականության ակադեմիական հետազոտությունների ամուր հիմք: Հետխորհրդային տարածքում տարածաշրջանային դաշինքները, էներգետիկ դիվանագիտությունը կամ ինքնության քաղաքականությունն ուսումնասիրող գիտնականները կարող են օգտագործել դրա արդյունքները ապագա հետազոտությունների համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթները և արդյունքները քննարկվել են Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի «Քաղաքագիտության» ամբիոնում: Ատենախոսության հիմնական դրույթները տպարգվել են թվով 6 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ տասնմեկ ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Թեկնածուական ատենախոսության տեքստային ծավալը, ներառյալ օգտագործված գրականության ցանկը՝ կազմում է 194 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, մանրամասն ներկայացված են թեմայի գիտական մշակվածությունն ու հետազոտության տեսամեթոդական հիմքերը, սահմանված են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան: Ներածության վերջում ներկայացված են

աշխատանքի գիտական նորույթը, գիտատեսական և կիրառական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլուխը՝ վերնագրված «**Վրաստանի և Թուրքիայի արտաքին քաղաքականության հայեցակարգային մոտեցումները տարածաշրջանային զարգացումների համատեքստում»,** կազմված է չորս ենթագլուխներց և նվիրված է Վրաստանի ու Թուրքիայի արտաքին քաղաքականության հայեցակարգային հիմքերի համադրական վերլուծությանը՝ տարածաշրջանային գործընթացների և շահերի համատեքստում: Այն ուսումնասիրում է, թե ինչպես են երկու պետությունները ձևավորում և իրականացնում իրենց արտաքին քաղաքական ռազմավարությունները՝ հատկապես Հարավային Կովկասում ազդեցություն գործադրելու նպատակով: Գլուխը նաև ընդգծում է փափուկ ուժի գործիքների կիրառման տեսական հիմքերը և անդրադառնում է երկու երկրների փոխադարձ փոխգործակցությանը և ռազմավարական շահերի հատմանը տարածաշրջանում:

Առաջին՝ «**Վրաց-թուրքական հարաբերությունների զարգացման տեսական ասպեկտները. փափուկ ուժի կիրառման գործիքակազմը»** ենթագլխում ներկայացվում է Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ Վրաստանի նկատմամբ կիրառվող «փափուկ ուժի» դերը և նշանակությունը՝ հիմնվելով քաղաքական տեսությունների վրա, մասնավորապես՝ Ջոզեֆ Նայի կոնցեպտի համատեքստում: Այս մոտեցումը դիտարկում է մշակութային, գաղափարական և արժեքային ազդեցության գործիքները՝ որպես ռազմական կամ տնտեսական ճնշումներից տարբերվող ազդեցության մեխանիզմներ: Ենթագլուխը հնարավորություն է տալիս քաղաքագիտական տեսանկյունից ուսումնասիրել Թուրքիայի «փափուկ ուժի» ռազմավարությունը Վրաստանի նկատմամբ:

Երկրորդ՝ **«Վրաստանի արտաքին քաղաքականության ռազմավարության հայեցակարգային հիմքերը»** ենթագլուխում

ներկայացվում են Վրաստանի արտաքին քաղաքականության ձևավորման և զարգացման հիմնական փուլերը՝ անկախացման պահից սկսած: Այստեղ առանձնապես անդրադառնում է այն պատմական գործընթացներին, որոնք ազդել են երկրի արտաքին քաղաքական վեկտորի վրա, ինչպես նաև ներքին և տարածաշրջանային քաղաքական-տնտեսական գործոնների դերին այդ քաղաքականության ձևավորման մեջ: Արտաքին քաղաքականության հստակ ուղեգծման համար վերլուծվում են հիմնական ռազմավարական փաստաթղթերը, ինչպիսիք են Ազգային անվտանգության հայեցակարգը 2005 և 2011 թվականների, որոնք ամրապնդում են Վրաստանի եվրատլանտյան ինտեգրման և տարածաշրջանային համագործակցության առաջնահերթությունները:

Երրորդ՝ **«Թուրքիայի արտաքին քաղաքականության հայեցակարգային հիմքերը ներկա փուլում»** ենթագլխում բացահայտվում են Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնարար գաղափարախոսական սկզբունքներն ու դրանց փոփոխությունները ժամանակակից համատեքստում, վերլուծում է Արդարություն և զարգացում կուսակցության (ԱԶԿ) դերը և Ահմեդ Դավութօղլուի արտաքին քաղաքական գաղափարները, ինչպես նաև նշում է արտաքին քաղաքականության ռազմավարական հիմնական ուղղությունները, սկզբունքներն ու ժամանակակից մարտահրավերները: Խոսքը վերաբերում է Թուրքիայի արտաքին քաղաքականության էվոլյուցիային՝ ներառյալ նեոօսմանական և պանթուրքական գաղափարախոսությունները, «զրո խնդիրներ հարևանների հետ» դոկտրինը, տարածաշրջանային ազդեցության մեծացումը, արտաքին քաղաքականության գործնական սկզբունքները և դրանց իրականացումը:

Չորրոդ՝ **«Վրաստանը և Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության ռազմավարությունը»** ենթագլխում ներկայացվում է Թուրքիայի աշխարհաքաղաքական ռազմավարու-

թյան հիմունքները, դրանց զարգացումն ու ժամանակի ընթացքում տեղի ունեցած փոխակերպումները: Ենթագլխում ընդգրկված է Թուրքիայի դիրքը տարածաշրջանային ուժերի համեմատությամբ, հատկապես Ռուսաստանի և Իրանի հետ հարաբերություններում: Վրաստանի դերակատարությունն ու Թուրքիայի հետ հարաբերությունների առանձնահատկությունները նույնպես ընդգրկված են, ներառյալ Վրաստանի արտաքին քաղաքականության ազդեցությունը Թուրքիայի հետ փոխհարաբերությունների վրա:

Ատենախոսության երկրորդ՝ **«Թուրքական գործոնը էներգետիկ/տրանսպորտային ոլորտներում Վրաստանի տարածաշրջանային քաղաքականության մեջ»** գլուխը ուսումնասիրում է, թե ինչպես է Թուրքիան իր էներգետիկ և տրանսպորտային նախաձեռնություններով՝ հատկապես նավթամուղերի, գազատարների և երկաթուղիների միջոցով, ներգրավվում և ազդում Վրաստանի տարածաշրջանային քաղաքականության վրա:

Առաջին՝ **«Երկկողմ համագործակցությունը նավթամուղի կառուցման և գործարկման ուղղությամբ. Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի քաղաքական նշանակությունը»** ենթագլխում վերլուծության են ենթարկվել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցման գործընթացը և դրա գործարկման կարևորությունը Թուրքիայի և Վրաստանի համագործակցության համատեքստում՝ ընդգծելով նավթամուղի ռազմավարական և քաղաքական դերակատարությունը տարածաշրջանում, ինչպես նաև ազդեցությունը Վրաստանի արտաքին քաղաքականության վրա:

Երկրորդ՝ «**Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը որպես Թուրքիայի արտաքին քաղաքականության գործիք»** ենթագլխում քննարկվել է Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի նշանակությունը որպես Թուրքիայի արտաքին քաղաքականուփյան գործիք՝ օգտագործելով էներգետիկ համագործակցությունը Վրաստանի նկատմամբ ազդեցության մշակման և տարածաշրջանային դիրքերի ամրապնդման համար:

Երրորդ՝ **«Երկկողմ տրանսպորտային համագործակցությունը. Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու նշանակությունը և գործառնական առավելությունները»** ենթագլուխը ներկայացնում է Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու կառուցման և գործարկման մանրամասները՝ ընդգծելով դրա ռազմավարական կարևորությունը երկու երկրների միջև տրանսպորտային կապերի զարգացման և տարածաշրջանային տնտեսական ինտեգրման համատեքստում:

Չորրորդ՝ **«Թուրք-վրացական առևտրատնտեսական հարաբերությունների դինամիկան»** ենթագլխում վերլուծվել է Թուրքիայի և Վրաստանի առևտրատնտեսական հարաբերությունների զարգացումն ու փոխգործակցությունը, նշելով դրանց դինամիկան, առկա աճի հնարավորություններն ու տարածաշրջանային համագործակցության հեռանկարները:

Ատենախոսության երրորդ՝ **«Թուրքական գործոնը Վրաստանի ներքաղաքական գործընթացների համատեքստում»** գլուխը նվիրված է Թուրքիայի ներգործության վերլուծությանը Վրաստանի ներքաղաքական դինամիկայի վրա: Գլխում ներկայացվում է Աջարիայի հարցում Թուրքիայի քաղաքական, տնտեսական և մշակութային ներգրավվածության դրսևորումները՝ որպես «փափուկ ուժի» կիրառման մեխանիզմ: Վերլուծվում է նաև Թուրքիայի արձագանքը «Վարդերի հեղափոխությունից» հետո Վրաստանի արտաքին քաղաքականության վերակողմնորոշմանը, ինչպես նաև 2012 թվականի իշխանափոխության հետևանքով երկկողմ հարաբերություններում առաջացած փոփոխությունները՝ քաղաքական շահերի, համագործակցության ձևաչափերի և տարածաշրջանային դերակատարման համատեքստում:

Առաջին՝ **«Աջարիայի հիմնախնդիրը Վրաստանում և թուրքական ազդեցության տարածման իրողությունները»** ենթագլխում ներկայացնում է Աջարիայի հիմնախնդիրը Վրաստանի պետականաշինության համատեքստում՝ կենտրոնանալով տարածաշրջանում Թուրքիայի ազդեցության վրա ԽՍՀՄ փլուզումից

հետո: Վերլուծվում է Աջարիայի քաղաքական առանձնահատկությունը Ասլան Աբաշիձեի կառավարման տարիներին և դրանից հետո՝ Սահակաշվիլու օրոք տարածաշրջանի ինտեգրումը Վրաստանին: Ուշադրություն է դարձվում Թուրքիայի տնտեսական ներթափանցմանը, կրոնական նախաձեռնություններին և կրթական քաղաքականությանը:

Երկրորդ՝ **«Թուրքիայի դիրքորոշումը «Վարդերի հեղափոխությունից» հետո Վրաստանի արտաքին քաղաքական վեկտորի փոփոխության նկատմամբ»** ենթագլուխը վերլուծում է Թուրքիայի արձագանքը և դիրքորոշումը Վրաստանի արտաքին քաղաքականության վեկտորի փոփոխության նկատմամբ՝ 2003 թվականի «Վարդերի հեղափոխությունից» հետո: Ներկայացվում է թուրք-վրացական համագործակցության զարգացման մասին՝ անվտանգության, էներգետիկայի և տնտեսության ոլորտներում, ինչպես նաև Թուրքիայի դերի մասին Վրաստանի պետականաշինության և անկախության ամրապնդման համատեքստում:

Երրորդ՝ **«2012 թ. իշխանափոխությունը և նրա ազդեցությունը երկկողմ միջպետական հարաբերությունների վրա»** ենթագլուխը քննարկում է Թուրքիայի պաշտոնական դիրքորոշումը և քաղաքական ռազմավարությունը Վրաստանի արտաքին քաղաքական վեկտորի փոփոխության համատեքստում՝ 2012 թվականից հետո: Անդրադարձ է կատարվում Թուրքիայի դերին տարածաշրջանային անվտանգության և տնտեսական համագործակցության ոլորտներում, ինչպես նաև Վրաստանի եվրոպական և արևմտյան ինտեգրման գործընթացներին Թուրքիայի արձագանքին, ինչպես նաև ներկայացվում է Թուրքիա-Վրաստան հարաբերությունների դինամիկան:

Եզրակացություններ բաժնում ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքները, որոնցից հարկ է առանձնացնել ստորև բերվածները՝

- Թուրքիան Հարավային Կովկասը ի սկզբանե չի դիտարկել որպես մեկ ամբողջություն: Շեշտը դրվել է թյուրքալեզու Ադրբեջանի հետ սերտ հարաբերությունների հաստատման վրա՝ խթանելով պանթուրքիստական գաղափարները: Թուրքիան Ադրբեջանին տեսնում էր որպես առանցքային գործընկեր՝ ընդհանուր էթնիկ և լեզվական կապերի պատճառով: Միաժամանակ Թուրքիան ամրապնդեց իր համագործակցությունը Վրաստանի հետ՝ ճանաչելով այն որպես կենսական միջանցք դեպի Ադրբեջան և Կենտրոնական Ասիայի այլ թյուրքալեզու երկրներ մուտք գործելու համար: Մինչ Թուրքիան դիվանագիտական և տնտեսական հարաբերություններ ուներ Վրաստանի և Ադրբեջանի հետ, նա ձեռնպահ մնաց Հայաստանի հետ պաշտոնական հարաբերություններ հաստատելուց: Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունները երբեք չեն հաստատվել պատմական գործոնների և Ադրբեջանի հետ սերտ հարաբերություններ ունենալու պատճառով:
- Վրաստանի մասնակցությունը թուրք-ադրբեջանական գործընկերությանը և առաջ մղելով նրա տարածաշրջանային շահերը՝ Թուրքիան ստեղծել է եռակողմ համագործակցության մեխանիզմ: Այս նախաձեռնության միջոցով Թուրքիան նպատակ ունի ստեղծել անվտանգ և հուսալի միջանցք Վրաստանի տարածքով, որը թույլ կտա Վրաստանին կամուրջ ծառայել քրիստոնեական աշխարհի և մահմեդական թյուրքալեզու երկրների միջև:
- Թուրքիայի փափուկ ուժը տարածվում է մշակութային, կրթական և կրոնական նախաձեռնությունների միջոցով: Թուրքական պետական գործակալությունները, հասարակական կազմակերպությունները և մասնավոր կազմակերպությունները Վրաստանում հիմնել են դպրոցներ և մշակութային կենտրոններ՝ խթանելով մարդկանց միջև ավելի խորը կապերը: Հատկապես Աջարիայում, որտեղ առկա է ընդհանուր

պատմական և մշակութային ժառանգություն, թուրքական ազդեցությունը դրսևորվում է կրթական փոխանակումների, առևտրային հարաբերությունների և կրոնական կապերի միջոցով:

- «Արդարություն և զարգացում» կուսակցության կառավարման շրջանը զգալի տեղաշարժ է արձանագրել Հարավային Կովկասում Թուրքիայի արտաքին քաղաքականության մոտեցման մեջ: Այս ընթացքում Թուրքիան որդեգրեց ավելի ակտիվ և գործնական տարածաշրջանային ռազմավարություն՝ հեռանալով Միացյալ Նահանգների «կրտսեր գործընկերոջ» նախկին դիրքից: Երկիրը պանթուրքիստականից անցում կատարեց նեոպանթուրքիստական մոտեցման, որը դարձավ նրա արտաքին քաղաքականության ոչ պաշտոնական դոկտրինի՝ նեոօսմանիզմի հիմնական բաղադրիչը: Այս նոր քաղաքականության հիմնական նպատակն էր ստեղծել ազդեցության գոտի նախկին Օսմանյան կայսրության տարածքներում՝ օգտագործելով փափուկ ուժի մեխանիզմները:
- Թուրք-վրացական հարաբերությունների հիմնաքարը նրանց ամուր տնտեսական գործընկերությունն է, որը մարմնավորվում է խոշոր ենթակառուցվածքային և էներգետիկ նախագծերով: Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (ԲԹՋ) նավթամուղը, Բաքու-Թբիլիսի-Էրզրում (ԲԹԷ) գազատարը և Բաքու-Թբիլիսի-Կարս (ԲԹԿ) երկաթգիծը խորհրդանշում են այս համագործակցությունը՝ Վրաստանը վերածելով եվրասիական էներգետիկ հոսքերի առանցքային տարանցիկ միջանցքի: Այս նախաձեռնությունները ոչ միայն ինտեգրում են Վրաստանին համաշխարհային շուկաներ, այլև Թուրքիային դարձնում են կասպյան ռեսուրսների դարպաս՝ ամրապնդելով նրա տարածաշրջանային դիրքը:
- Քաղաքական դասավորվածությունն ակնհայտ է նաև Թուրքիայի կողմից Վրաստանի եվրատլանտյան նկրտումների խրախուսման մեջ: Որպես ՆԱՏՕ-ի անդամ, Թուրքիայի՝

Վրաստանի անդամակցության ջատագովությունը խթանում է վերջինիս՝ արևմտյան կառույցներին ինտեգրվելու ձգտումը: Այս դասավորվածությունը ծառայում է փոխադարձ շահերին. Թուրքիայի համար նա ապահովում է հուսալի դաշնակից իր հյուսիսարևելյան սահմանին, մինչդեռ Վրաստանը ձեռք է բերում ռազմավարական գործընկեր իր աշխարհաքաղաքական մարտահրավերները հաղթահարելու համար:

- Թուրքիայի ներգրավվածությունը Վրաստանի հետ տեղի է ունենում բարդ աշխարհաքաղաքական շրջանակներում, որտեղ Ռուսաստանի, ԵՄ-ի և ԱՄՆ-ի շահերը համընկնում են: Թուրքիան նավարկում է այս տարածաշրջանում՝ խթանելով տարածաշրջանային կապը՝ միաժամանակ խուսափելով Ռուսաստանի հետ անմիջական առճակատումից: Վրաստանի հետ նրա ռազմավարական գործընկերությունը ընդգծում է Թուրքիայի վարած «նուրբ» արտաքին քաղաքականությունը՝ օգտագործելով տնտեսական և մշակութային գործիքները՝ ազդեցությունը ամրապնդելու համար՝ առանց անտագոնիզմ հրահրելու:
- Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականությունը հակադրվում է Ռուսաստանի Դաշնության ռազմավարական շահերին: Թեև երկու երկրներն աշխատում են երկկողմ հարաբերությունների ամրապնդման և հետագա համագործակցության համար ճանապարհ հարթելու ուղղությամբ, նրանց նպատակները հաճախ հակասում են: Թուրքիան ձգտում է նվազեցնել Ռուսաստանի ազդեցությունը և ուժեղացնել իր ներկայությունը տարածաշրջանում: Թուրքիայի գլխավորած «Թուրքիա-Ադրբեջան-Վրաստան» նախաձեռնությունը, որը վայելում է Արևմուտքի աջակցությունը, նպատակ ունի վերափոխել Հարավային Կովկասի աշխարհաքաղաքականությունը և փոխել տարածաշրջանային ուժերի հավասարակշռությունը հօգուտ Թուրքիայի: Մյուս կողմից, Ռուսաստանի

ազգային անվտանգության մտահոգությունները, որպես կովկասյան պետություն, բխում են տարածաշրջանում նրա աշխարհաքաղաքական դիրքի պահպանման և բարձրացման շուրջ: Այս տեսանկյունից, Ռուսաստանի շահերը Հարավային Կովկասում պահանջում են Վրաստանի վրա ազդեցություն ապահովելու և Հայաստանի հետ դաշինքի ամրապնդման անհրաժեշտություն:

- Մեսխեթցի թուրքերի հայրենադարձությունը մնում է թուրք-վրացական հարաբերությունների ամենավիճելի հարցերից մեկը: Այս հարցը քաղաքականացվել է՝ ստեղծելով շահերի բախում երկու ժողովուրդների միջև: Թուրքիան հանդես է գալիս մեսխեթցի թուրքերի վերաբնակեցման օգտին վրացական Սամցխե-Ջավախեթի շրջանում՝ որպես իր տարածաշրջանային շահերն առաջ մղելու ավելի լայն ջանքերի մի մաս: Այս նախագիծը խթանելով՝ Թուրքիան ձգտում է բարենպաստ պայմաններ ստեղծել Վրաստանում իր ազդեցության համար: Ավելին, հարցը Թուրքիայի համար ծառայում է որպես ռազմավարական գործիք՝ ամրապնդելու իր դիրքերը ոչ միայն Վրաստանի ներսում, այլև Հարավային Կովկասում: Վրաստանում ունենալով զգալի տնտեսական և քաղաքական ազդեցություն՝ Թուրքիան օգտագործում է իր լծակները վրացական կառավարության վրա ճնշում գործադրելու համար՝ ստիպելով նրան զիջումների գնալ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականության հարցերում:
- Չնայած իր հաջողություններին՝ թուրք-վրացական գործընկերությունը բախվում է մարտահրավերների, այդ թվում՝ քաղաքական տեղաշարժերի, տնտեսական խոցելիության և հասարակական մտավախությունների: Թուրքիայի համար Վրաստանում ազդեցության պահպանումը պահանջում է այդ մարտահրավերներին անդրադառնալ թափանցիկ և փոխշահավետ քաղաքականության միջոցով: Վրաստանի

համար ինքնիշխանության պահպանումը Թուրքիայի աջակցության լծակներով հանդերձ պահանջում է զգույշ դիվանագիտական հավասարակշռություն, հատկապես հաշվի առնելով Հարավային Կովկասի ավելի լայն աշխարհաքաղաքական հոսանքները:

Նայելով առաջ՝ թուրքական գործոնը կշարունակի վճռորոշ դեր խաղալ Վրաստանի զարգացման մեջ: Առևտրային կապերի խորացումը, մշակութային փոխանակումների ընդլայնումը և համատեղ ենթակառուցվածքային ձեռնարկումները խոստանում են նոր բարձունքների հասցնել իրենց գործընկերությունը: Այնուամենայնիվ, այս հետագիծը կախված է արտաքին ճնշումներից և ներքին այլախոհությունից կողմնորոշվելու երկու ազգերի կարողությունից՝ ապահովելով, որ նրանց համագործակցությունը մնա ուժեղ տարածաշրջանային կայունության և բարգավաճման համար:

Հենվելով ատենախոսության եզրակացությունների վրա՝ ներկայացնում ենք հետևյալ կիրառական առաջարկությունները.

1. Թուրքիան պետք է շարունակաբար զարգացնի իր տարածաշրջանային ռազմավարությունը՝ հստակ տարբերակելով Հարավային Կովկասի երկրներին, հատկապես ընդգծելով երկկողմ շփումների արդյունավետությունն Ադրբեջանի և Վրաստանի հետ, որպեսզի խուսափի միատարր մոտեցումներից:
2. Առաջնահերթ պետք է աջակցել եռակողմ համագործակցության մեխանիզմներին՝ անվտանգության և տնտեսական միջանցքների ամրապնդման նպատակով, ինչը կնպաստի տարածաշրջանային կայունության և տնտեսական ինտեգրման խորացմանը:
3. «Արդարություն և զարգացում» կուսակցության արտաքին քաղաքականության մոդելը պետք է շարունակաբար հարմարեցվի տարածաշրջանային իրողություններին՝ խթանելով

նեոօսմանիզմի իրազեկված և հիմնավորված կիրառումը տարածաշրջանում հաջողություններ ունենալու համար:

4. Էներգետիկ և ենթակառուցվածքային ծրագրերը պետք է դիտարկվեն որպես ռազմավարական համագործակցության հիմք, որով կարող են ամրապնդվել տնտեսական և էներգետիկ կապերը Վրաստանի հետ:
5. Թուրքիայի աջակցությունը Վրաստանի եվրատլանտյան ինտեգրմանը պետք է համաչափ լինի՝ պահպանելով տարածաշրջանում քաղաքական հավասարակշռությունը և խուսափելով Ռուսաստանի հետ կոնֆլիկտից:
6. Հաշվի առնելով տարածաշրջանում մեծ տերությունների մրցակցությունը՝ Թուրքիան պետք է կիրառի իր դիվանագիտության և ազդեցության գործիքները՝ խուսափելով անմիջական հակասություններից:
7. Մեսխեթցի թուրքերի հարցը պետք է դիվանագիտորեն կառավարել՝ խուսափելով տարածքային կամ էթնիկ կոնֆլիկտների սրման վտանգներից:
8. Թուրքիան և Վրաստանը պետք է համատեղ մշակեն քաղաքական և տնտեսական մեխանիզմներ՝ հակազդելու տեղական և տարածաշրջանային մարտահրավերներին, պահպանելով իրենց փոխշահավետ համագործակցությունը և նպաստելով Հարավային Կովկասի կայուն զարգացմանը:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ գիտական հոդվածներում.

1. **Սերոբյան Անահիտ**, «Արտաքին քաղաքականության մեջ փափուկ ուժի կիրառման գործիքակազմի մասին հայեցակարգային մոտեցումները», Լրատու - Մեսրոպ Մաշտոց համալսարան, 1(29), Հայաստան, 2023, էջ 218-227:
2. **Սերոբյան Անահիտ,** «Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության նոր իրողությունները և նպատակները», Տարածաշրջան և աշխարհ, Երևան, 2023, 5 (48), էջ 23-27:

3. **Սերոբյան Անահիտ**, «Թուրքիայի փափուկ ուժի կիրառման նավթային գործոնը Վրաստանի հանդեպ», Տարածաշրջան և աշխարհ, Երևան, 2023, №6, էջ 21-27:
4. **Սերոբյան Անահիտ**, «Թուրքիայի արտաքին քաղաքականության ժամանակակից հայեցակարգային հիմքերը», Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի, Երևան, 2023, № 2, էջ 61-73:
5. **Սերոբյան Անահիտ**, «Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու նշանակությունը եվ գործառնական առավելությունները», Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի, Երևան, 2024, № 1, էջ 61-77:
6. **Սերոբյան Անահիտ**, «2012թ. իշխանափոխությունը եւ նրա ազդեցության հետևանքները Թուրքիա-Վրաստան հարաբերությունների վրա», Տարածաշրջան և աշխարհ, Երևան, 2024, 6 (55), էջ 14-21:

СЕРОБЯН АНАИТ АРМЕНОВНА

МЯГКАЯ СИЛА ТУРЦИИ В ПРОЦЕССАХ РЕГИОНАЛЬНОЙ ИНТЕГРАЦИИ ГРУЗИИ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 – “Политические институты и процессы”. Защита диссертации состоится 22 октября 2025 г. в 14:30 часов на действующем в ЕГУ специализированном совете 056 "Политология и международные отношения" МОНКС КВОН РА (адрес: РА, г. Ереван, 0025, Алека Манукяна, 1).

РЕЗЮМЕ

Целью данной диссертационной работы является комплексное и глубокое исследование анализ роли Турции в регионально-политических процессах Грузии. Особое внимание уделяется выявлению и осмыслению политических, экономических, культурных и геополитических факторов, которые определяют характер двусторонних отношений между Турцией и Грузией, а также формируют механизмы их взаимодействия в более широком региональном контексте Южного Кавказа. Работа направлена на выявление динамики турецко-грузинского сотрудничества, оценки степени влияния Турции на внешнеполитическую траекторию Грузии, а также анализа стратегических интересов Анкары в регионе с учётом современных вызовов и международных реалий.

Во введении обосновывается актуальность темы исследования, цели и задачи диссертации, объект и предмет исследования, а также научная новизна и возможные направления её теоретического и практического применения.

Структура и объем диссертации. Диссертация состоит из введения, трех глав, одиннадцати подглав, заключения и списка литературы. Общий объем текста кандидатской диссертации, включая список литературы, составляет 194 страниц.

В первой главе диссертации, озаглавленной **«Концептуальные подходы внешней политики Грузии и Турции в контексте региональных процессов»,** которая состоит из четырёх подразделов,

проводится сравнительный анализ концептуальных основ внешней политики Грузии и Турции в контексте региональных процессов и интересов. Рассматривается, как обе страны формировали и реализуют свои внешнеполитические стратегии, особенное с целью усиления влияния на Южный Кавказ. В главе также подчёркиваются теоретические основы применения инструментов мягкой силы и анализируется взаимное сотрудничество и пересечение стратегических интересов двух государств в регионе.

Вторая глава диссертации под названием **«Турецкий фактор в энергетической и транспортной сферах региональной политики Грузии»** посвящена изучению того, как Турция посредством своих энергетических и транспортных инициатив — особенно нефтепроводов, газопроводов и железных дорог — вовлечена в региональную политику Грузии и оказывает на неё влияние. В главе показано, как участие Турции в этих стратегических инфраструктурных проектах преследует не только экономические, но и политические цели, сочетая двустороннее сотрудничество с Грузией и использование инструментов «мягкой силы» для укрепления своего влияния в регионе.

Третья глава диссертационной работы **«Турецкий фактор в контексте внутриполитических процессов Грузии»** посвящена анализу влияния Турции на внутреннюю политическую динамику Грузии. В главе рассматриваются проявления политической, экономической и культурной вовлечённости Турции в Аджарии как механизм применения «мягкой силы». Также анализируется реакция Турции на переориентацию внешней политики Грузии после «Революции роз» и на те изменения в двусторонних отношениях, которые произошли в результате смены власти в 2012 году — в контексте политических интересов, форматов сотрудничества и региональной роли.

В заключении представлены основные результаты исследования, подводятся итоги и даются некоторые рекомендации.

ANAHIT SEROBYAN ARMEN

TURKEY'S SOFT POWER IN GEORGIA'S REGIONAL INTEGRATION PROCESSES

Dissertation under 23.00.02 – "Political Institutions and Processes," aspiring to earn Ph.D. in Political Sciences. The defense of the dissertation will take place on October 22, 2025, at 14:30 at the Specialized Council 056 "Political Sciences and International Relations" of the RA MoESCS HESC, operating at Yerevan State University (Address: RA, Yerevan, 0025, 1 Alex Manoogian).

SUMMARY

The aim of this dissertation is to conduct a comprehensive study and in-depth analysis of Turkey's role in the regional-political processes of Georgia. Special attention is given to identifying and understanding the political, economic, cultural, and geopolitical factors that shape the nature of bilateral relations between Turkey and Georgia, as well as the mechanisms of their interaction within the broader regional context of the South Caucasus. The research seeks to reveal the dynamics of Turkish-Georgian cooperation, assess the extent of Turkey's influence on Georgia's foreign policy trajectory, and analyze Ankara's strategic interests in the region in light of current challenges and international realities.

The introduction outlines the relevance of the research topic, outlines the objectives and tasks of the dissertation, defines the object and subject of the study, as well as presents the scientific novelty and potential directions for its theoretical and practical application.

Structure and Length of the Dissertation. The dissertation consists of an introduction, three chapters with eleven subchapters, a conclusion, and a bibliography. The total length of the PhD dissertation, including the bibliography, is 194 pages.

The first chapter of the dissertation, titled ***"Conceptual Approaches to the Foreign Policy of Georgia and Turkey in the Context of Regional Processes,"*** consists of four subchapters and provides a comparative analysis of the conceptual underpinnings of the foreign policies of Georgia's and Turkey's within the framework of regional processes and interests. It examines how both

countries have formulated and implemented their foreign policy strategies, particularly with the aim of strengthening their influence in the South Caucasus. The chapter also highlights the theoretical foundations for the use of "soft power" tools and analyses the mutual cooperation and intersection of the strategic interests of the two states in the region.

The second chapter of the dissertation, titled ***"The Turkish Factor in the Energy and Transport Spheres of Georgia's Regional Policy,"*** is devoted to examining how Turkey, through its energy and transport initiatives, particularly oil pipelines, gas pipelines, and railways, is involved in Georgia's regional policy and exerts influence over it. The chapter demonstrates how Turkey's participation in these strategic infrastructure projects serves not only economic but also political objectives, combining bilateral cooperation with Georgia and the use of "soft power" tools to strengthen its influence in the region.

The third chapter of the dissertation, titled ***"The Turkish Factor in the Context of Georgia's Domestic Political Processes,"*** is dedicated to analysing Turkey's influence on the internal political dynamics of Georgia. The chapter explores manifestations of Turkey's political, economic, and cultural involvement in Adjara as a mechanism for the application of soft power. It also examines Turkey's response to Georgia's foreign policy reorientation after the Rose Revolution, as well as the changes in bilateral relations following the change of government in 2012—within the context of political interests, cooperation formats, and Turkey's regional role.

In the conclusion, the study presents the main findings, summarises the key arguments, and offers several recommendations.